ԶԵԿՈՒՑՈՒՄ

Հարգելի պարոն նախարար, կոլեգիայի հարգելի անդամներ, ներկայացվում է տեղեկատվություն 2014 թվականի պտուղբանջարեղենի և խաղողի մթերումների կազմակերպման նախապատրաստական աշխատանքների և մթերումների կանխատեսվող ծավալների մասին:

Ագրովերամշակող ընկերությունների կողմից 2013 թվականին մթերվել է 223947 տոննա պտուղբանջարեղեն և խաղող, այդ թվում՝ 167185 տոննա խաղող, 27970 տոննա բանջարեղեն, որից 18970 տոննա լոլիկ և 28792 տոննա պտուղ, որից 5189 տոննա խնձոր, 1921 տոննա դեղձ, 13039 տոննա ծիրան, 8644 տոննա այլ պտուղ և հատապտուղ:

2013 թվականի պտուղբանջարեղենի և խաղողի մթերման ծավալները 2012 թվականի համեմատ աճել են 3.7 տոկոսով: Բարձրացել են նաև մթերման միջին գները: Մասնավորապես խաղողի մթերման միջին գինը կազմել է 146,2, լոլիկինը՝ 36.9 դրամ, որոնք նախորդ տարվա (142.1 և 34.7 դրամ) համեմատ աճել են համապատասխանաբար 2.9 և 6.0 տոկոսով:

2013 թվականին արձանագրվել է նաև մթերվող պտուղբանջարեղենի և խաղողի դիմաց գյուղացիական տնտեսություններին կատարվող վճարումների գործընթացի բարելավում: Վճարումների մեծ մասը կատարվել են անմիջապես գնման պահին կամ 7-10 բանկային օրերի ընթացքում, իսկ մնացած վճարումները գրեթե ամբողջությամբ ավարտվել են մինչև տարեվերջ:

2013 թվականին մինչև մթերումների սկսելը մի շարք ընկերություններ գյուղացիական տնտեսությունների հետ կնքել էին 9331 պայմանգիր, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում էր 35.3 տոկոսով: Պայմանագրերի շրջանակներում գյուղացիական տնտեսություններին տրամադրվել էր 78.0 մլն. դրամ կանխավճար և 250.5 մլն. դրամի բուժանյութեր և այլ օժանդակություն:

Ընթացիկ տարում պտուղբանջարեղենի մթերումների գործընթացի կազմակերպման նպատակով իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

- Կատարվել է պտուղբանջարեղենի մթերումների կանխատեսվող ծավալների մոնիթորինգ, ըստ որի 2014 թվականի մթերման պահանջարկը կազմում է շուրջ 75250.0 տոննա բանջարեղեն, որից՝ 60966.0 տոննա լոլիկ և 28979.0 տոննա պտուղ, որից՝ 6726.0 տոննա խնձոր, 4222.0 տոննա դեղձ, 9007.0 տոննա ծիրան և 9024 տոննա այլ պտուղ: Վերամշակող ընկերությունների կողմից պտղի և բանջարեղենի մթերումների պահանջարկը շուրջ 50.7 հազար տոննայով գերազանցում է նախորդ տարվա ընթացքում կատարված

փաստացի մթերման ծավալները, մասնավորապես՝ 42.0 հազար տոննայով լոլիկինը, 2.0 հազար տոննայով խնձորինը և 3.2 հազար տոննայով այլ պտղինը:

- Պտուղբանջարեղենի մթերման կանխատեսվող ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ մարզպետարաններին և նախարարության գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններին՝ մարզի գյուղացիական տնտեսություններին տեղեկացնելու, վերջիններիս ու վերամշակող ընկերությունների միջև հումքի գնման պայմանագրերի կնքման գործընթացի կազմակերպման հարցում աջակցություն ցուցաբերելու նպատակով:

Բացի այդ ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալների ՀՀ մարզային այցելությունների շրջանակներում ի թիվս այլ միջոցառումների հանդիպումներ են կազմակերպվել վերամշակող ընկերությունների հետ, որպեսզի վերջիններս սկսեն գյուղացիական տնտեսությունների հետ հումքի գնման պայմանագրերի կնքման գործընթացը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև «Հայաստանի պահածոյագործների և հյութ արտադրողների միություն» իրավաբանական անձանց միության նախագահի հետ՝ աջակցելու միության անդամներին՝ գյուղացիական տնտեսությունների հետ հումքի գնման պայմանագրերի կնքման գործընթացի կազմակերպման հարցում:

- Սկսվել են ընթացիկ տարվա պտուղբանջարեղենի և խաղողի բերքի գնման նպատակով գյուղացիական տնտեսությունների և վերամշակող ընկերությունների միջև պայմանագրերի կնքման գործընթացը:

2014 թվականի հունիսի 16-ի դրությամբ կնքվել է 11965 պայմանգիր, որից 11381-ը՝ խաղողի և 584-ը՝ պտուղբանջարեղենի գնման:

Պայմանագրերի շրջանակներում գյուղացիական տնտեսություններին տրամադրվել է 92.5 մլն. դրամ կանխավճար և 675.1 մլն. դրամի բուժանյութեր և այլ օժանդակություն:

Պայմանագրերի կնքման գործընթացը շարունակվում է:

Պայմանագրային հիմունքներով մթերումների իրականացումն անհրաժեշտ է դարձնել պարտադիր նախապայման և ամեն ինչ կարվի, որպեսզի վերամշակող ընկերությունները ընթացիկ տարում, մինչև մթերումները սկսելը, նախատեսվող մթերումների ամբողջ ծավալի համար գյուղացիական տնտեսությունների հետ ունենան կնքված պայանագրեր:

- Սկսվել են բանջարեղենի մթերումները և 2014 թվականի հունիսի 16-ի դրությամբ մթերվել է ավելի քան 200.0 տոննա վայրաճ բանջարեղեն (շուշան, բոխի, սինդրիկ և այլն), խաղողի տերև և շուրջ 20.0 տոննա վարդ և ելակ:

- ՀՀ վարչապետի մոտ 2014 թվականի հունվարի 18-ին պտուղբանջարեղեն վերամշակող ընկերությունների հետ կայացած քննարկման նպատակով կազմվել և ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել պատրաստի արտադրանքի իրացման գործընթացում առկա խնդիրները և դրանց լուծման վերաբերյալ առաջարկությունները, ինչպես նաև գյուղմթերքներ վերամշակող ընկերությունների պատրաստի արտադրանքի մնացորդների և ոլորտի գործունեության վերաբերյալ վիճակագրական տվյալներ:

Վերը նշված քննարկումից հետո Հայաստանի պահածոյագործների և հյութ արտադրողների միության նախագահ Ե. Թարվերդյանին առաջարկվել է՝

1) մանկական սննդի արտադրության զարգացման նպատակով որպես թիրախ ընտրել ծիրանի և դեղձի խտանյութի արտադրությունը և ըստ այդմ գնահատել արտադրանքի իրատեսական ծավալները, արտաքին շուկայում մրցունակ դիտարկվելու համար պահանջվող չափանիշները և նորմերը.

2) միության անդամների հետ քննարկել համատեղ ձեռնարկություն ստեղծելու ձևաչափի ներքո տեղական արտադրանքի բրենդի անվանման հարցը, որոշել ներկայացվելիք արտադրատեսակը կամ արտադրատեսակները, առաջին խմբաքանակի թողարկման ժամկետը և ըստ այդմ ներկայացնել կոնկրետ բիզնես-ծրագիր:

- Պտուղբանջարեղենի և կաթի վերամշակման ոլորտում առկա խնդիրների համատեղ լուծման, ոլորտների գործունեության բարելավման ու թափանցիկության, ինչպես նաև գյուղատնտեսական հումքի մթերումների կազմակերպման հնարավոր խոչընդոտների հաղթահարման նպատակով սույն թվականի փետրվարի 26-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում ստորագրվել են համագործակցության հուշագրեր՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության և Հայաստանի պահածոյագործների և հյութ արտադրողների ու Կաթնամթերք արտադրողների միությունների միջև:

Հարգելի պարոն նախարար, կոլեգիայի հարգելի անդամներ ընթացիկ տարվա մթերումների կազմակերպման ուղղությամբ կատարված նախապատրաստական աշխատանքների, ինչպես նաև կանխատեսվող մթերման և համախառն բերքի ծավալների համադրումից ստացվում է, որ ընթացիկ տարվա պտուղբանջարեղենի մթերումները կանցնեն բավականին սահուն և առանց լուրջ խոչընդոտների:

Գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված պտղի, բանջարեղենի և խաղողի իրացման նպատակով մթերումների նախապատրաստական աշխատանքներին

զուգահեռ աշխատանքներ են տարվում նաև դրանց արտահանման և վաճառքի աջակցության ուղղությամբ:

Այդ նպատակով սկսվել է պտուղբանջարեղենի արտահանումների և խողողի մթերումների կանխատեսվող ծավալների մոնիթորինգի աշխատանքները, որի ամբողջական արդյունքները պատրաստ կլինեն առաջիկայում:

2013 թվականին հանրապետությունից արտահանվել է 64505.1 տոննա պտուղբանջարեղեն, խաղող և կարտոֆիլ, այդ թվում՝ 26584.6 տոննա պտուղ, որից 23258.9 տոննա ծիրան, 7562.8 տոննա խաղող, 6379.6 տոննա բանջարեղեն և 23978.2 տոննա կարտոֆիլ:

2013 թվականի արտահանման ծավալները 2012 թվականի նկատմամբ ավելացել է 2.1 անգամ:

2014 թվականի հունիսի 16-ի դրությամբ հանրապետությունից արտահանվել է 23468.3 տոննա պտուղբանջարեղեն, խաղող և կարտոֆիլ, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշը գերազանցում է շուրջ 1.6 անգամ:

Հունիսի 8-ից վերսկսվել են Երևան քաղաքի Կասյան փողոցի վերին հատվածում գործող գյուղատնտեսական մթերքների տոնավաճառների աշխատանքները, իսկ պահանջարկի առկայության դեպքում կգործարկվեն նաև այլ վայրերում:

2013 թվականի հունիսի 8-ից «Մալիբու» սրճարանի հարևանությամբ, իսկ օգոստոսի 4-ից Կասյան փողոցի վերին հատվածում վերսկսվել են յուրաքանչյուր շաբաթ և կիրակի գործող գյուղատնտեսական մթերքների տոնավաճառները: Տոնավաճառներին մասնակցել են ՀՀ տարբեր մարզերը ներկայացնող գյուղացիական տնտեսություններ, որոնք երևանյան սպառողներին են ներկայացրել բացառապես սեփական արտադրանքը: Գյուղացիական տնտեսությունների մասնակցությունը տոնավաճառներին անվճար է: Տոնավաճառներին միայն սեփական արտադրանքը ներկայացնող գյուղացիական տնտեսությունների մասնակցությունը ապահովելու և միաժամանակ առևտրային միջնորդների մասնակցությունը բացառելու նպատակով սահմանվել և հետևողականորեն կիրառվել են մասնակցության հատուկ ընթացակարգեր. մասնակցությունը տոնավաճառներին թույլատրվել է միայն գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ) կողմից ստացված համապատասխան տեղեկանքների առկայության դեպքում, որոնք հավաստել են, որ վաճառքի ներկայացվող ապրանքը հանդիսանում է տվյալ մասնակցի սեփական արտադրանքը: Բացի այդ, միջնորդների ներկայությունը տոնավաճառներին բացառելու նպատակով տոնավաճառի կազմակերպիչների կողմից տեղում իրականացվել է

վերահսկողություն: Տոնավաճառների մասնակիցներին անվճար տրամադրվել են հարմարավետ տաղավարներ, վաճառասեղաններ, կշեռքներ, սայլակներ և արտահագուստ: Տոնավաճառների տարածքում հասարակական կարգը և երթևեկությունը կարգավորվել է ՀՀ ոստիկանության կողմից: Տոնավաճառների ավարտին կազմակերպվել են տարածքի մաքրման աշխատանքները:

2013 թվականին Կասյան փողոցի վերին հատվածում կազմակերպվել է թվով 48 տոնավաճառ: Ընդհանուր առմամբ 48 տոնավաճառներին գրանցվել են շուրջ 5326 գյուղացիական տնտեսություններ, որոնք ներկայացրել են թվով 165 գյուղական համայնքներ: Յուրաքանչյուր տոնավաճառի մասնակիցների կողմից վաճառքի է ներկայացվել շուրջ 45 տեսակի գյուղմթերք: Միջին հաշվով 1 տոնավաճառի ընթացքում իրացվել է 30-40 տոննա գյուղմթերք, ընդհանուր առմամբ՝ 1800 տոննա, իսկ <Մալիբու> սրճարանի հարևանությամբ՝ թվով 63 տոնավաճառ: Ընդհանուր առմամբ 63 տոնավաճառներին գրանցվել են շուրջ 5257 գյուղացիական տնտեսություններ, որոնք ներկայացրել են թվով 154 գյուղական համայնքներ: Յուրաքանչյուր տոնավաճառի մասնակիցների կողմից վաճառքի է ներկայացվել շուրջ 40 տեսակի գյուղմթերք: Միջին հաշվով 1 տոնավաճառի ընթացքում իրացվել է 25-35 տոննա գյուղմթերք, ընդհանուր առմամբ՝ 1900 տոննա: